

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը

«Լեռնային Ղարաքաղի Հանրապետության ջրային օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները և լրացումները պայմանավորված են ջրային ոլորտում օրենսդրական բարեփոխումների իրականացման հետ: Ներկայացվող «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծով հստակ սահմանվում են ջրային ոլորտում ամբողջական կարգավորում իրականացնելու համար Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) վերապահված իրավասությունները, այդ թվում՝ սակագնային կարգավորման իրականացման, ոլորտում գործունեության լիցենզավորման, տրամադրված լիցենզիաների պայմանների կատարման նկատմամբ հսկողության իրականացման, իսկ դրանց խախտման դեպքում իրավախախտ անձանց նկատմամբ տույժերի կիրառման, մատակարարման եւ օգտագործման կանոնների, մատակարարման պայմանագրերի օրինակելի ձեւերի սահմանման, ինչպես նաեւ այլ իրավասություններ:

Նախագծի մշակման համար հիմք է ընդունվել նաև 2015 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Առկա իրավիճակը և տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Ջրային ոլորտի կարգավորմանն ուղղված պետական քաղաքականության նպատակն է մատակարարման կառավարման ու կարգավորման գործառույթների հստակ տարանջատումը: Ջրամատակարարման կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունները մատուցվելու են Հանձնաժողովի տրամադրած լիցենզիայի հիման վրա, բացառությամբ օրենսգրքով նախատեսված դեպքերի՝ մասնավորապես երբ այդ գործառույթներն իրականացվելու են բացառապես սեփական կարիքների համար կամ իրականացվելու են համայնքների կամ ջրօգտագործողների ընկերությունների կամ ջրօգտագործողների ընկերությունների միությունների կամ համայնքային բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից:

Հանձնաժողովի իրավասություն է վերապահվում սահմանելու խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները, լիցենզավորված անձանց և բաժանորդների միջև կնքվող՝ խմելու ջրամատակարարման կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը կամ պարտադիր պայմանները, իր սահմանած կարգով կազմակերպելու քննարկումներ Հանձնաժողով ուղղված հարցադրումների, բողոքների վերաբերյալ և քննարկումների արդյունքով կայացնելու որոշումներ, սահմանելու սպառողներին մատուցվող ծառայությունների որակին (սպասարկման որակին) ներկայացվող նվազագույն պահանջները և այլն:

Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծով առաջարկվող փոփոխություններն ու լրացումներն ուղղված են ջրային ոլորտում օրենսդրական բարեփոխումների իրականացմանը՝ ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետության ապահովմանը:

Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունումը նպաստում է Հանձնաժողովի իրավասությունների շրջանակների և լիազորությունների հստակեցմանը և ջրային ոլորտում առավել ամբողջական եւ արդյունավետ կարգավորման համակարգի ստեղծմանը:

Ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

Օրենքի նախագիծը իր բնույթով նորմատիվ իրավական ակտ է՝ փոփոխություններ և լրացումներ է նախատեսում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքում, որը միավորում է ջրային ոլորտում հասարակական հարաբերությունների կարգավորմանն ուղղված բոլոր հիմնական նորմերը:

**ԱՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ